



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ

26/հոկտեմբերի/2018 թ.

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8 ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու .....~~7~~..... անդամներ:

### Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Ֆինանսական բաժնի պետ Արմինե Ղազարյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Հայկ Դավթյանը

### Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանը

### Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը

Լսեցին

**ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ձեկ. Վարդան Հովհաննիսյան/*

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 26-ի արտահերթ նիստի հետևյալ *օր ա կ ա ր գ ը*.

1.1. «Ջերմուկի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային հիմնարկը, «Ջերմուկի երիտասարդական կենտրոն» և «Ջերմուկի համայնքի Կ.Ա. Ասրյանի անվան շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները լուծարելու և «Սպորտի, երիտասարդության, մշակույթի և տուրիստական-տեղեկատվական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին.

զեկ. համայնքի ղեկավար Վ. Հովհաննիսյան

